Նախապատրաստվենք Երկրորդ Գալուստին

Կանգնել սուրբ տեղերում

Կարդացեք սուրբ գրությունների հետևյալ հղումները և արտահայտությունները՝ փնտրելով եղանակներ, որոնք մենք կարող ենք ընտրել՝ սուրբ տեղերում կանգնելու համար:

Սաղմոս 24.3–4, Եսայիա 58.13, Հելաման 5.12, 3 Նեփի 18.24, Վարդապետություն և Ուխտեր 27.15, 115.5–6

Երիտասարդ կանանց գերագույն նախագահությունից քույր Էնն Մ. Դիբը բացատրել է.

Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնը խորհուրդ է տվել. «Սուրբ տեղերը ներառում են մեր տաճարները, մեր ժողովատները, մեր տները և Սիոնի ցցերը, որոնք . . . «պաշտպանության և ապաստանի համար են» [Վարդապետություն և Ուխտեր 115.6]» [«Պատրաստվեք Տիրոջ Մեծ օրվա համար», New Era, մայիս 1982, 50]: Ի հավելումն նշվածների, կարծում եմ, որ մեզնից յուրաքանչյուրը կարող է բազմաթիվ այլ տեղեր գտնել: *Տեղ* բառը գուցե առաջին հերթին մենք հասկանանք որպես ֆիզիկական միջավայր կամ աշխարհագրական վայր: Սակայն, *տեղը* կարող է լինել «որոշակի վիճակ, դրություն կամ հոգեվիճակ» [Merriam-Webster Online, «տեղ», merriam-webster.com/dictionary/place]: Սա նշանակում է սուրբ տեղերը կարող են նաև ներառել *պահեր ժամանակի ընթացքում*՝պահեր, երբ Սուրբ Հոգին վկայում է մեզ, պահեր, երբ մենք զգում ենք Երկնային Հոր սերը կամ պահեր, երբ մենք պատասխան ենք ստանում մեր աղոթքներին: Նույնիսկ ավելին, ես կարծում եմ, որ ամեն անգամ, երբ քաջություն եք ունենում կանգնելու այն բանի համար, ինչը ճիշտ է, հատկապես այն իրավիճակներում, երբ ուրիշ ոչ ոք չի կամենում դա անել, դուք ստեղծում եք սուրբ տեղ: (Էնն Մ. Դիբ, «Ձեր սուրբ տեղերը», *Լիահոնա*, մայիս 2013 թ., 115)

Վերցնենք Սուրբ Հոգին՝ որպես մեզ ուղեցույց

Կարդացեք սուրբ գրությունների հետևյալ հղումները և արտահայտությունները՝ փնտրելով եղանակներ, որոնցով մենք կարող ենք վերցնել Սուրբ Հոգին՝ որպես մեզ ուղեցույց:

Առակաց 3.5–6; Սաղմոս 118.8–9; 1 Նեփի 4.6; 2 Նեփի 32.5; Մորոնի 10.5; Վարդապետություն և Ուխտեր 11.12–14

Առաջին նախագահությունից նախագահ Դալլին Հ. Օուքսն ուսուցանել է.

Ինչպե՞ս ենք վերցնում Սուրբ Հոգին՝ որպես մեզ ուղեկից: Մենք պետք է ապաշխարենք մեր մեղքերի համար ամեն շաբաթ, և թարմացնենք մեր ուխտերը՝ հաղորդությունն ընդունելով մաքուր ձեռքերով և անարատ սրտով, ինչպես որ մեզ պատվիրվել է [տես Վարդապետություն և Ուխտեր 59.8–9, 12]: Միայն այդպես կարող ենք ունենալ «Հոգին միշտ [մեզ] հետ ունենալու» աստվածային խոստումը (Վարդապետություն և Ուխտեր 20.77): . . .

. . . Մենք միշտ պետք է անենք այն բաները, որոնք անհրաժեշտ են այդ Հոգին պահպանելու համար: Մենք պետք է պահենք պատվիրանները, աղոթենք առաջնորդության համար, հաճախենք եկեղեցի և ընդունենք հաղորդություն յուրաքանչյուր կիրակի: Եվ մենք երբեք չպետք է անենք որևէ բան, որը հեռացնում է Հոգուն: Հատկապես մենք պետք է խուսափենք պոռնոգրաֆիայից, ոգելից խմիչքներից, ծխախոտից, թմրադեղերից և միշտ խուսափենք մաքրաբարոյության օրենքը խախտելուց: (Dallin H. Oaks, “Be Not Deceived,” Liahona, Nov. 2004, 46)

© 2024 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD80007812_201_183-1